ԱՅԱՆԼՐՔ ԵՎ ԴԵՐԲԵՅԼԻՔ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄՈՒՐԱԴ ԲՈՋՈԼՅԱՆ

Վերջին տասնամյակներում Թուրքիայում զգալիորեն աճել է հետաքրքրությունը երկրի սոցիալ-տնտեսական պատմության նկատմամբ։ Հրատարակվել են մի շարք աշխատություններ, որոնց հեղինակները վերլուծել են օսմանյան հասարակության սոցիալական կառուցվածքը և ձգտել լուսաբանել օսմանյան ավատատիրության բաղկացուցիչ մասը կազմող ինստիտուտները։ Առանձին ուշադրություն է հատկացվել այնպիսի ինստիտուտների, ինչպիսիք են այանլըքը և դերեբեյլիքը[1]։ Հարկ է նշել, որ հիշյալ ինստիտուտները սովետական պատմագիտության հատուկ ուսումնասիրության առարկա չեն եղել։ Սակայն, այդուհանդերձ, մի շարք հեղինակներ իրենց թեմաների աղերսով շոշափել են այանլըք և դերեբեյլիք ինստիտուտների հարցը[2]։

Ուսումնասիրողների զգալի մասն այաններին նույնացնում է դերեբեյների հետ, ենթադրելով որ դրանք նույն սոցիալական խավն են ներկայացնում, սակայն, հանգամանքների բերումով, հիշատակվում են տարբեր անուններով։ Նման մոտեցումը պատահական չէ։ Աղբյուրների մեջ այան և դերեբեյ հասկացությունների միջև հստակ սահմանազատում գոյություն չունի և նույն պատմական դեմքերը մերթ կրում են այան, մերթ դերեբեյ անունը։ Այսպես, օրինակ, XIX դ. առաջին կեսի թուրք տարեգիր Ա. Ջևդեթը 1815—1816 թթ. Տրապիզոնի շրջակայքի դերեբեյների դեմ ձեռնարկված միջոցառումների մասին խոսելիս Ռիզե քաղաքի այան Մեմիշ աղային ներկայացնում է որպես դերեբեյի[3]։ XIX դ. առաջին կեսին Փոքր Ասիա այցելած անգլիացի ճանապարհորդ Ջ. Քիննեյրը դերեբեյներ է անվանում կենտրոնական Անատոլիայի մի շարք այաններին[4]։ Վերջապես, այդ շրջանի պաշտոնական փաստաթղթերում կենտրոնական կառավարության դեմ ըմբոստացած բոլոր ծայրամասային ավատապետերը հիշատակվում են այան կամ դերեբեյ անվան տակ, կամ ընդհանրացված «մյութեգալեբե»[5] տերմինով։

---

[1] I. H. Uzunçarşılı, Meşhur Rumeli ayanlarından Tirsinikli Ismail, Yılık oğlu Süleyman ağalar ve Alemdar Mustafa Pasa, Ankara, 1946; Ç. Uluçay, 18. ve 19. yüzyıllarda Saruhanda eskiyalık ve halk hareketleri, Istanbul, 1956; N. Berkes, Türkiyede Çağdaşlaşma, Ankara, 1973; H. Inalcık, The Nature of traditional society (Political modernisation in Japan and Turkey), Istanbul, 1966, p. 48 *և այլն։*

[2] *Մ. Զուլալյան, Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ., Երևան, 1980։ Հ. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Երևան, 1965,* В. Гордлевский, Избр. соч., т. 3, М., 1962 *և ուրիշներ։*

[3] A. Cevdet, Tarih-i Cevdet, tertib-i cedid, c. 10, Der Saadet, 1893, s. 218.

[4] J. M. Kinneir, Voyage dans l'Asie Mineur, l'Arménie et le Kurdistan dans les annès 1813 et 1814, t. 1–2, Paris, 1815, p. 85.

[5] *Արաբերեն «մյութեգալիբ» բառից, որը նշանակում է ըմբոստ, անհնազանդ։*

Որպեսզի որոշենք այն տեղը, որ զբաղեցնում էին վերոհիշյալ երկու կատեգորիաներն օսմանյան ավատապետական աստիճանակարգի մեջ, նախ տեսնենք, թե ինչպե՞ս են առանձին հեղինակներ բացատրում այդ հասկացությունները։ Սկսենք այաններից։ Մ. Պակալընի «Պատմական անունների և տերմինների բառարանում» կարդում ենք հետևյալը. «Այաններ էին կոչվում պետության կողմից նշանակվող ավագանու ներկայացուցիչները, ինչպես նաև ծերակույտերի անդամները ծայրագավառներում։ Ժողովրդի մեջ այան էին անվանում նաև հարուստ համաքաղաքացիներին՝ «այան-ը բելդե» (քաղաքի այան), «այան-ը մահալլե» (թաղի այան) և այլն։ Գավառների և գավառակների բնակչությունն ընտրում էր իր այանին, որը պետք է օժանդակեր վալիին կամ կագիին[6] պետական հարկերի և տեղական կարիքներին հատկացվող գումարի չափը որոշելու գործում։ Այն ժամանակից, ինչ վարչական ապարատը դադարեց անխափան գործելուց, այանները բռնագրավեցին մյութեսելլիմի[7] և վոյվոդայի[8] պաշտոնները և դադարեցին ենթարկվել գերագույն իշխանությանը»[9]։ Նույն հասկացությունը թուրք պատմաբան Ի. Ուզունչարշըլը բացատրում է հետևյալ կերպ. «Վիլայեթների և կազաների[10] բնակչության կողմից ընտրվող պաշտոնատար անձինք կրում էին «այան» անունը։ Սրանք կառավարության և բնակչության միջև հանգես էին գալիս որպես միջնորդներ՝ վարչական հարցեր կարգավորելիս և միաժամանակ տվյալ վայրի վարչապետն էին... ծառայության դիմաց նրանք պետությունից ստանում էին հավաքած հարկերի մի մասը որպես պարգև»[11]։ Այան տերմինը մոտավորապես նույն ձևով է բացատրում Ա. Ռասիմը[12]։ Հիշյալ հարցի մասին լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում Պ. Ժյուշերոն։ «Այանները,— գրում է նա,— պարտավոր էին ապահովել մասնավոր անձանց կյանքի և գույքի անվտանգությունը, հետևել քաղաքներում կարգ ու կանոնի պահպանմանը և թույլ չտալ տեղական փաշային՝ կեղեքել ժողովրդին»[13]։ Մի այլ վկայության համաձայն, գոյություն ունեին վեց հոգուց բաղկացած այանական խորհուրդներ, որոնք իրականացնում էին իշխանությունը տվյալ գավառում[14]։ Սույն հարցը շոշափում է նաև արդի թուրք սոցիոլոգ Ն. Բերկեսը՝ իր «Արդիականացումը Թուրքիայում» ծավալուն աշխատության մեջ։ «Այսուհետև,— գրում է նա, նկատի ունենալով XVII դ. կեսը,— հողից ստացվող եկամուտը

---

6 Վալին վիլայեթ կամ էլայեթ անունը կրող խոշորագույն վարչական միավորի կառավարիչն էր։ Կադին կատարում էր գավառային դատավորի պարտականությունները։

7 Մյութեսելլիմ էին կոչվում այն սանջակների (գավառ) կառավարիչները, ովքեր այդ պաշտոնը ստանում էին կապալային սիստեմի շնորհիվ։ Բառացիորեն մյութեսելլիմ նշանակում է հանձն առած, ստանձնած։

8 Վոյվոդաներ էին կոչվում վոյվոդալըքի կարգավիճակ ունեցող սանջակների կառավարիչները, ովքեր, որպես կանոն, զբաղվում էին ռազմական հարցերով։

9 M. Z. Pakalın, Tarih terimleri ve deyimleri sözlüğü, c. 1, İstanbul, 1946, c. 947.

10 Գավառակ, ոչ մեծ վարչական բաժանմունք, որը մտնում էր սանջակի կազմի մեջ։

11 I. H. Uzuncarsılı, նշվ. աշխ., էջ 132։

12 A. Rasim, Osmanlı Tarihi, c. 3, İstanbul, 1327-1329, s. 1029-1030.

13 St. Denys de Juchereau, Revolutions de Constantinople en 1807-1808, Paris, 1813, p. 245.

14 F. Beajour, Tableau du commerce de la Grèce, Paris, 1800, p. 48-49.

պատկանում էր ոչ միայն պետությանը, այլ նաև նորելուկ սոցիալական ուժերին, որոնցից էին այանները։ Այս վերջիններս հանդես էին գալիս որպես գավառակների ներկայացուցիչներ կառավարության առջև, զբաղվում էին վարչատնտեսական հարցերով և իրականացնում էին արդարադատությունը։ Սկսած 17-րդ դարի կեսերից նրանց հզորությունն այնքան աճեց, որ նրանք այլևս չէին զգում որևէ հովանավորի պաշտպանության կարիքը։ Արդեն նրանց ժառանգները հավակնում էին իրենց հայրերի զբաղեցրած պաշտոնին։ Այսպես երևան եկան այանների դինաստիաները՝ «այան-ը հանեդան»[15]։ Այնուհետև Ն. Բերկեսը շեշտում է, որ այանի կոչումը պաշտոնական բնույթ չուներ, բայց, հակառակ դրան, այանները մեծ նշանակություն ստացան նաև ռազմաքաղաքական հարցերի լուծման ժամանակ[16]։ Հարկ է նշել, որ այանի պաշտոնի ժառանգականության մասին դեռ XVIII դ. վերջերին նշել է Մ. դ'Օսոնը[17]։

Սովետական պատմագիտության մեջ այանության հարցը շոշափվել է տարբեր առիթներով։ Այն մեղ մոտ առաջինը բարձրացրել է Ա. Միլլերը՝ «Մուստաֆա փաշա Բայրակտար» աշխատության մեջ։ Նա գտնում էր, որ այս ինստիտուտը չի կարելի համարել ֆեոդալ-կալվածատերերի մի նոր խավ։ Նրանք, ըստ Ա. Միլլերի, իրոք կալվածատերեր են եղել, բայց այս տերմինը նշանակում է ոչ թե սոցիալական կատեգորիա, ինչպես սիպահիները[18] և դերբեյները, այլ պաշտոն[19]։ Մ. Մեյերը այանների ի հայտ գալը կապում է սիպահիական աստիճանակարգի բարձրագույն ներկայացուցիչների անվան հետ։ Այանների քաղաքական ազդեցության աճը, ըստ նրա, կապված էր ռազմաավատական սիստեմի ճգնաժամի հետ, որի հետևանքով նրանց իշխանությունը տարածվեց սանջակների ու էլայեթների քաղաքական կյանքի բոլոր բնագավառների վրա, և XVIII դ. առաջին տասնամյակներում, որպես հատուկ գավառային վարչական միավոր, առաջացավ այանլըք ինստիտուտը[20]։

Այան տերմինը, ըստ երևույթին, շատ հին ծագում ունի։ Դեռ վաղ անցյալում այն մուսուլմանական արևելքում գործ է ածվել որպես հարգարժան և երևելի մարդկանց մակդիր։ Որոշ տվյալների համաձայն, Օսմանյան կայսրության մեջ այան հասկացությունն արմատավորվել է XVI դ.՝ սուլթան Սյուլեյման Կանունիի օրոք[21]։ Սկզբնապես այն եղել է պետական ապարատի և հոգևորականության բարձրաստիճան պաշտոնյաների մակդիր, ինչպես օրինակ՝ «դեվլեթ-ի այան», «ֆահր-ուլ այան» և այլն[22]։ Հետագայում, առանձնապես XVII դ. վերջերին և XVIII դ. սկզբին առաջ եկավ այանների

---

15 N. Berkes, Նշվ. աշխ., էջ 97, 98։

16 Նույն տեղում։

17 M. d'Ohsson, Tableau générale de l'Empire Ottoman, VII, Paris, 1824 p. 286.

18 Սիպահիներ էին կոչվում ռազմական ավատների՝ թիմարների և զեամետների ժամանակավոր տիրակալները։

19 А. Ф. Миллер, Мустафа паша Байрактар. Оттоманская империя в начале XIX века, М.—Л., 1947, с. 33.

20 М. С. Мейер, К вопросу об изменениях в структуре и составе правящего класса Османской империи в XVIII в («Проблемы истории Турции», М., 1978, с. 57—58).

21 A. Sućeska, Poriyeklo i mjesto ajana u društvenu političkom sistemu turska države („Pregled", Sarajevo, 1960, N 12, c. 103-104).

22 M. Z. Pakalın, Նշվ. աշխ., էջ 946։

մի նոր դաս, որն արդեն հիմնականում բաղկացած էր գավառային ավագանու ներկայացուցիչներից։ Այժմ այան հասկացությունը տարածվում էր բոլոր այն անձանց վրա, ում բարձր դիրքը պայմանաչորոված էր կա՛մ ռազմական աստիճանակարգում նրանց զբաղեցրած տեղով (ենիչերիների և պահնստային զորքերի հրամանատարները), կա՛մ վարչական ու դատական ապարատում նրանց կատարած ֆունկցիաների կարևորությամբ (վոյվոդաներ, մյութեսելլիմներ, կադիներ), կա՛մ գիտական ու հոգևորական սանով (ուլեմաներ, սեիդներ)[23]։ Նոր այանները, որպես կանոն, ունևոր մարդիկ էին։ Նրանցից ոմանք եղել էին հողի ժառանգական տիրակալներ (սիպահիների վերնախավը), մյուսները՝ վարչական պաշտոնների կապալառուներ (մյութեսելլիմները, մուխասըլները), մի մասն էլ՝ առևտրականներ, վաշխառուներ, համքարությունների ավագներ և այլն։ Սակայն բոլորի համար ընդհանուր էր այն, որ նրանց քաղաքական ազդեցության աճը բացատրվում էր հողային սեփականության և զրամական հարստության կուտակումով։

Այանլրք ինստիտուտի ծագումը սերտորեն կապված է 1695 թ. մալիքյանների[24] սիստեմի հիմնադրման հետ։ Այս թվականից սկսած պետությունը մյուլթեզիմի, այսինքն՝ կապալի միջոցով հարկահավաք դառնալու իրավունքը պաշտոնապես տվեց գավառական մեծահարուստներին։ Այան ընդհանուր անունը ստացած այս անձինք շուտով անփոխարինելի դարձան իրենց բնակավայրերի տնտեսական հարցերի լուծման գործում։ Կառավարությունը նրանց հանձնարարեց տվյալ շրջանի ելք ու մուտքի մատյանները, որոնց մեջ մանրամասն նշվում էր, թե բնակչությունն ինչպիսի և ինչ քանակությամբ հարկեր է վճարում պետությանը։ Այանները ստանձնեցին հարկահավաքմուհասըլի պաշտոնը՝ դառնալով կապալառուներ[25]։ Այս մատյանները կազմելու ժամանակ կատարած մեքենայությունների շնորհիվ նրանք դարձան մեծահարուստներ[26]։ Արտաքնապես այանները հանդես էին գալիս կառավարության և բնակչության միջև միջնորդի դերում և կատարում էին մի շարք այլ ֆունկցիաներ՝ հանդիսանում էին տվյալ գավառի կառավարիչը, զբաղվում էին զորահավաքով, կազմում էին բողոքագրեր այն կառավարական պաշտոնյաների հասցեին, ովքեր չարաշահում էին իրենց իշխանությունը և այլն[27]։ Սակայն, այս պարտականությունները կրում էին ձևական բնույթ. ավելի հաճախ այանները համագործակցում էին կառավարական գործակալների հետ՝ բնակչությանը կեղեքելու համար[28]։

Կայսրության անկման շրջանում պալատի բարձրաստիճան պաշտոնյաներն այաններին օգտագործում էին որպես իրենց կամակատարները գավառներում՝ փոխարենը նրանց շնորհելով տարբեր պաշտոններ[29]։ Հասնելով տնտեսական հզորության, այանները սկսեցին իրենց ձեռքում կենտրոնացնել տվյալ վայրի ռազմական ու քաղաքական իշխանությունը և ստեղծեցին սե-

---

23 A. Sučeska, Նշվ. աշխ., էջ 110։

24 Կառավարության կողմից առանձին անհատներին ցմահ տրվող տիրույթներ։

25 C. Ulucay, Նշվ. աշխ., էջ 53, 54։

26 Նույն տեղում։

27 St. Denys de Juchereau, Նշվ. աշխ., էջ 245։

28 M. d'Ohsson, Նշվ. աշխ., էջ 286։

29 H. Inalcık, Նշվ. աշխ., էջ 48։

փական զորքեր։ Դա նրանց հնարավորություն տվեց մալիքյանները (ցմահ ստանձնած կապալները) վերածել ժառանգական տիրույթների, որոնք պաշտոնի հետ միասին սկսեցին անցնել նրանց ժառանգորդներին։ Այսպիսի այաններից ոմանց, օրինակ, Յանինայի տիրակալ Թեբեդելենլի Ալի փաշային՝ կառավարությունը ստիպված եղավ տալ վեզիրի տիտղոս[30]։

Այանական դինաստիաների ձևավորման ընթացքը ակնառու երևում է Կարաասման օղլուների ավատական տոհմի օրինակից։ Այս տոհմի անդամները XVIII դ. ընթացքում տիրեցին Սարուխանի սանջակի բոլոր վարչական պաշտոններին և դրանք իրենց ձեռքում պահեցին մինչև 1816 թ., երբ մահացավ տոհմի ազդեցիկ ներկայացուցիչներից վերջինը՝ Հաջի Հյուսեին աղան։ Սակայն նույնիսկ ցմահ կապալների վերացումից հետո էլ նրանք պահպանեցին իրենց տնտեսական հզորությունը՝ արդեն որպես մասնավոր սեփականատերեր[31]։

Այանների հանդեպ կառավարության քաղաքականությունը կայուն չէր։ 1714 թ. սուլթան Ահմեդ III-ը փորձեց ցմահ կապալների սիստեմը վերացնել, բայց արդյունքի չհասավ։ Նրան հակադրվող հիմնական տարրը այաններն էին, որոնք չէին ցանկանում զիջել արդեն ձեռք բերած դիրքերը։ Համոզվելով դրանում, կառավարությունը դիմեց մի այլ քայլի։ 1726 թ. մեծ վեզիր Մուհսինզադե Մեհմեդ փաշայի նախաձեռնությամբ հրապարակվեց հրովարտակ, որը այաններին թույլ էր տալիս պաշտոնապես զբաղեցնել գավառների կառավարչի պաշտոններ, այսինքն՝ օրինականացնում էր նրանց իշխանությունը[32]։ Սրանով կառավարությունը փորձում էր այաններին վերցնել իր հսկողության տակ։ Հրովարտակի համաձայն, այաններին պետք է ընտրեին սանջակի կամ կազայի երևելի քաղաքացիները, իսկ նահանգապետերն իրավունք չունեին միջամտելու։ Այն բանից հետո, երբ մեծ վեզիրն արդեն ընտրված այանին հաստատում էր իր պաշտոնում, նահանգապետը նրան տալիս էր մի փաստաթուղթ, որը կոչվում էր «այանլըք բույրուլդուսու»[33]։ Իսկ երբ առաջացան այանական դինաստիաները, որոնք հրաժարվում էին ենթարկվել կառավարության որոշումներին, վերջինիս քաղաքականությունն այանների հանդեպ արմատապես փոխվեց[34]։

XVIII դ. օսմանյան կառավարությունը երեք անգամ (1726, 1773 և 1785 թթ.) փորձեց չեղոքացնել այանների ռազմաքաղաքական հզորությունը։ Քանի որ այս առթիվ հրապարակված ֆերմաններից առաջին երկուսը հայտնաբերել չհաջողվեց, ուստի բերում ենք 1785 թ. հրովարտակը, որի բովանդակությունը հետևյալն է. «Իզմիրի շրջանի ավագ մոլլային, սույն էյալեթի բոլոր կադիներին, նաիբներին, մուխասըլներին, սպաներին և ծերակույտի անդամներին.

Մեզ լուրեր են հասնում, որ ձեր էյալեթի բոլոր քաղաքներում և կազաներում հայտնվել են մի շարք այաններ, որոնք. խախտելով մեր սրբազան

---

30 M. Z. Pakalın, նշվ. աշխ., էջ 947։

31 H. Inalcık, նշվ. աշխ., էջ 48։

32 Թուրք հետազոտող Մ. Պակալընը առաջարկում է այս թվականը համարել այանլըք ինստիտուտի պաշտոնական հիմնադրման տարի (նշվ. աշխ., էջ 947)։

33 Հրամանագիր։

34 I. H. Uzunçarşılı, նշվ. աշխ., էջ 2։

օրենքները, ինքնակամ փոփոխություններ են մտցնում ելք ու մուտքի մատյանների (թեվդի դեֆթերների) մեջ, նշանակում և գանձում են ապօրեն հարկեր, կեղեքում ու կողոպտում են թշվառ ռայաներին ու հանուն իրենց անձնական շահերի քարուքանդ են անում երկիրը։ Դեռ մեր աղնվաշուք նախնի Մուստաֆա 3-րդի օրոք սադրազամ Մուհսինզադե Մեհմեդ փաշան մի ֆերման էր հրապարակել [1726 թ.], համաձայն որի այաններն ընտրվում էին վիլայեթի երևելի անձանց կողմից և իրենց պաշտոնը կարող էին ստանալ միայն սադրազամի գրավոր համաձայնությամբ։ Սակայն այս պայմանը չէր պահպանվում ո՛չ Անատոլիայում, ոչ էլ Ռումելիում։ Այս պատճառով 1198 թ. [1773 թ.] մի նոր ֆերման հրապարակվեց, որը կրկնում էր [1726 թ.] ֆերմանի պայմանները և ավելացնում, որ այանի թեկնածուն պետք է ճանաչված լինի կառավարական շրջաններում։ Այանական բույրուլդուն կարող էր տալ միայն սադրազամը։ Սակայն այնուհետև էլ ամեն ինչ շարունակվեց նախկին ձևով։ Նույնիսկ որոշ վալիներ շարունակում էին իրենց անունից այանական բույրուլդուներ բաժանել։ Կաշառքի և նվերների օգնությամբ այանի պաշտոն ձեռք բերող պատահական մարդիկ սկսեցին սանջակներում դրավել վարչական կառավարչությունը։ Ելնելով այս հանգամանքից, մենք որոշեցինք վերացնել այանի պաշտոնը ամբողջ կայսրության մեջ և նրանց տեղը, ինչպես եղել է նախկինում, նշանակել քաղաքապետեր, այսպես կոչված, «քեդխուդաներ»։ Թող քաղաքների ծերակույտերի անդամներն իրենք ընտրեն քաղաքապետերին, իսկ մենք՝ կհաստատենք։ Այսուհետև արգելվում է նույնիսկ արտասանել այան անունը։ Ով չի ենթարկվի մեր կամքին և կշարունակի տանջել ու կեղեքել խեղճ ռայաներին, ենթարկվելու է դաժան պատժի»[35]։

Վարչական միջոցներով այանլըք ինստիտուտը վերացնելու փորձը նպատակին չհասավ։ Գավառներում այանների դիրքերն այնքան հզոր էին, որ նորընտիր քեդխուդաներն ամբողջությամբ նրանցից կախման մեջ էին և կատարում էին միայն նրանց հրահանգները։ 1790 թ. կառավարող շրջանները հատուկ հրովարտակով ստիպված եղան վերականգնել այանի պաշտոնը[36]։ 1808 թ. մայրաքաղաքի բյուրոկրատիայի և այանների միջև կնքվեց մի դաշնագիր, այսպես կոչված, «Սենետ-ի իտտիֆակը», որն օրինականացրեց վերջիններիս իշխանության ժառանգականությունը գավառներում։

Այժմ անցնենք դերեբեյության հարցին։ Նախ նշենք, որ ժամանակակից թուրքերենում դերեբեյ տերմինը գործածվում է որպես ֆեոդալ տերմինի համարժեք և բոլոր դասագրքերում ֆեոդալական հասարակական ֆորմացիան ներկայացվում է դերեբեյլիք բառով։

Դերեբեյ հասկացությունը բացատրելիս որոշ հեղինակներ հիմք են ընդունում նրա բառացի նշանակությունը (թուրքերենում դերե-բեյի բառացիորեն նշանակում է գետահովտի տիրակալ, հովտապետ)։ Օրինակ, սովետական ուսումնասիրող Վ-իյը (Կոնստանտին Վասիլևսկի) այս տերմինի ծագումնաբանությունը կապում է աշխարհագրական պարագաների հետ։ «Հողի և կլիմայի առանձնահատկությունների պատճառով,— գրում է նա,— Քուրդիստանում գյուղատնտեսական աշխատանքները հիմնականում կատար-

---

35 M. Z. Pakalın, նշվ. աշխ., էջ 947։

36 Նույն տեղում։

վում են գետահովիտներում և արհեստական ոռոգման միջոցով։ Այստեղից էլ գալիս է քուրդ ֆեոդալի անունը՝ դերե-բեյ, այսինքն հովտի տիրակալ»[37]։ Այս նույն կարծիքը պաշտպանում է նաև ակադեմիկոս Վ. Գորդլևսկին, սակայն նա դերեբեյ հասկացությունը չի սահմանափակում միայն քուրդ ֆեոդալներով[38]։ Մ. Մեյերը դերեբեյների ծագումը կապում է այանների հզորացման հետ, ենթադրելով, որ հենց այանները հանդիսացան այն միջավայրը, «որի միջից 18-րդ դարի կեսին երևան եկան ամենաազդեցիկ դերեբեյները»[39]։

Դերեբեյների ծագմանը և գործունեությանը զգալի տեղ է հատկացնում Ն. Բերկեսը՝ վերը հիշատակված աշխատության մեջ։ Ըստ նրա, դերեբեյները պատմաբեմ իշան XVII—XVIII դդ. սահմանագծում և դերեբեյներ էին դառնում կենտրոնական իշխանությունից դժգոհ վալիները, յամակները, ենիչերիները, ինչպես նաև որոշ այաններ[40]։ Համաձայն մի այլ թուրք պատմաբանի՝ Բ. Բայկալի, դերեբեյ էին անվանում այն ավատապետերին, որոնք սկզբնապես եղել են պետական պաշտոնյաներ, բայց XVII դ. սկսած հանդես են եկել կենտրոնական իշխանության դեմ[41]։ «Իսլամի հանրագիտարանում» նշված է, որ դերեբեյներ էին կոչվում այն հզոր ու ազդեցիկ անձինք, որոնք նախապես լինելով պետական պաշտոնյաներ՝ հետագայում վեր են ածվել ինքնուրույն վասալների։ XIX դ. սկզբում միայն Կարամանի և Անատոլիայի էյալեթների վալիներն էին կառավարության կողմից նշանակված։ Մնացած վալիները, առանց բացառության, եղել են ինքնակոչներ[42]։ Պետք է նշել, որ տվյալ հարցին թուրք պատմագիտության մոտեցումը սկզբունքորեն սխալ է և հիմնված է պատմական փաստերի միտումնավոր խեղաթյուրման վրա։ Անտեսելով այն հանգամանքը, որ դերեբեյության օրրանը եղել է Արևմտյան Հայաստանը, թուրք հետազոտողները պնդում են, թե իբր այն առաջացել է լոկ Օսմանյան կայսրության անկման շրջանում (XVII—XVIII դդ.), կենտրոնական իշխանության թուլացման հետևանքով, և որ դերեբեյներ են դարձել հիմնականում կենտրոնախույս վալիները, դասալիք սպաները, այանները, ավազակապետերը և այլն։ Ընդ որում, նրանք դերեբեյների շարքն են դասում բացարձակապես թուրք և թուրքմեն ավատապետերին[43]։ Նման մոտեցումն ունի իր պատճառները։ Առաջին. թուրք պատմաբաններն ավանդականորեն ժխտում են իրենց երկրի պատմության մեջ ֆեոդալիզմի գոյությունը, ելնելով այն բանից, որ մահմեդականության կրոնական օրենսդրությունը (շարիաթ) սկզբունքորեն դեմ է ֆեոդալական հարաբերություններին։ Հետևաբար, պնդում են նրանք, Օսմանյան կայսրության մեջ ճորտի և ճորտատիրող հարաբերություններ չեն եղել, քանի որ դյուղացին անմիջական կախ-

---

37 В-ий [Константин Василевский], К аграрным отношениям в Курдистане. Анализ курдского дере-бейлика («Аграрные проблемы», М., 1932, кн. 1—2, с. 115—131).

38 В. Гордлевский, նշվ. աշխ., էջ 21։

39 М. С. Мейер, նշվ. աշխ., էջ 57։

40 N. Berkes, նշվ. աշխ., էջ 98։

41 B. S. Baykal, Tarih Deyimleri Sözlüğü, Ankara, 1963, s. 37.

42 „Islam Ansiklopedisi", c. 3, cüz 27, Istanbul 1945, s. 540։ Այս տեսակետը բաժանում է նաև Մ. Ս. Մեյերը (М. С. Мейер, նշվ. աշխ., էջ 57)։

43 I. H. Uzunçarşılı, նշվ. աշխ., էջ 57-60։

ման մեջ է եղել պետությունից[44]։ Դերեբեյության դասակարգային էության ճանաչումը կհանգեցներ այս կարծիքի հերքմանը, քանի որ դերեբեյի և նրան ենթակա գյուղացիության փոխհարաբերությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ ֆեոդալի և ճորտի հարաբերություններ[45]։ Երկրորդ պատճառը թուրքական կառավարության այն քաղաքականությունն է, որի համաձայն Թուրքիայում քուրդ ժողովուրդ, հետևաբար և քրդական հարց գոյություն չունի։ Այդ քաղաքականության հետևանքով պատմական ուսումնասիրությունների մեջ համարյա տեղ չի տրվում քրդերին, հետևապես և քուրդ դերեբեյների հարցին։

Ինչպես հայտնի է, օսմանյան կառավարությունը նվաճված հողերի գերակշիռ մասը վերածում էր պետական սեփականության՝ դրա վրա տարածելով թիմարային սիստեմը։ Այս առումով բացառություն չկազմեց նաև Արևմտյան Հայաստանը։ XVI դ. ընթացքում թուրքական կառավարությունը Հյուսիսային Միջագետքից և Պարսկաստանից Հարավային Հայաստան տեղափոխեց բազմաթիվ քուրդ ու թուրքմեն ցեղերի՝ ի հակակշիռ տեղի քրիստոնյա բնակչության[46]։ Ելնելով քաղաքական նկատառումներից, կառավարությունը որոշեց այս հողերի վրա, բացի թիմարային սիստեմից, ստեղծել այնպիսի հողատիրության ձևեր, ինչպիսիք էին յուրտլուք-օջակլիքները[47], հյուքյումեթլիքները[48], մյուլքերը[49] և այլն։ Քուրդ ավատապետերը ձեռք էին բերում բացառիկ արտոնություններ՝ վերածվելով ոչ թե պետական պաշտոնյաների, այլ սուլթանի վասալների։ Այսպիսով, երկրի արևելքում քուրդ վերնախավի և հայ աշխատավոր գյուղացիության միջև հաստատվում էին այնպիսի ֆեոդալական հարաբերություններ, ինչպիսիք եղել են ֆեոդալիզմի դարն ապրած բոլոր երկրներում։

Կրոնական ֆանատիզմով տոգորված քուրդ ավատապետերը կեղեքումներով ու անդթությամբ գերազանցեցին այլ երկրների ֆեոդալներին, քանի որ թուրք կառավարողները նրանց գործունեության լիակատար ազատություն էին տվել։ Այստեղ չենք անդրադառնում հայ գյուղացու թշվառ վիճակն։ Դա բազմիցս արել են հայ և օտար հեղինակները, դեռ անցյալ դարից սկսած։ Բայց անհրաժեշտ ենք համարում նշել, որ հայ ժողովրդի արևմտյան հատվածի վրա քուրդ ավատապետերի իշխանության հաստատումն արգելակեց նրա հետագա սոցիալ-տնտեսական զարգացումը՝ վերականգնելով վաղ միջնադարի սոցիալական հարաբերությունները, առանձին դեպքերում ստեղծելով նույնիսկ ստրկատիրական հարաբերություններ։ Հենց քուրդ ավատապետերի ստեղծած սոցիալ-տնտեսական կարգերն էլ հայ իրականության մեջ

---

44 Այս տեսակետը քիչ թե շատ պաշտպանում են համարյա բոլոր թուրք հետազոտողները, բայց այն ավելի ակնառու է Բարկանի աշխատությունում (Ö. L. Barkan, Türk Toprak Hukuku Tarihinde Tanzimat,—„Tanzimat, I", İstanbul, 1940).

45 N. Berkes, 100 Soruda Türkiye İktisat Tarihi, İstanbul, 1972, s. 66-67.

46 B. Nikitine, Les Kurdes, étude sociologique et historique, Paris, 1956, p. 185.

47 Յուրտլուք-օջակլիք էին կոչվում այն սանջակները, որոնք այնտեղ իշխող ֆեոդալական տոհմերի ժառանգական տիրույթն էին։

48 Հյուքյումեթլիքի ստատուս ունեցող շրջանները համարվում էին իշխող ֆեոդալների սեփականությունը և անցնում էին հորից որդուն։ Այս հողերի վրա խասսեր, զեամեթներ և թիմարներ գոյություն չունեին։ Նրանց տիրակալները սուլթանին վճարում էին ամենամյա հարկ և պատերազմի ժամանակ իրենց ջոկատներով միանում էին թուրքական բանակին։

49 Սուլթանի կողմից որպես մասնավոր սեփականություն շնորհված տիրույթ։

ստացան դերեբեյություն անունը, իսկ իրենք՝ ավատապետերը, սկսեցին կոչվել դերեբեյներ։ Ինչ վերաբերում է թուրք և թուրքմեն դերեբեյներին, ապա նրանց ծագումնաբանությունը բացատրում է Վ. Գորդլևսկին՝ սելջուկյան շրջանի ֆեոդալ Հյուսամետտին Զոբան բեյի օրինակի վրա։ «Սելջուկների անկման հետևանքով,— գրում է նա,— Զոբան բեյը ձեռք բերեց քաղաքական անկախություն... այդ արդեն նրա ժառանգական տիրույթներն էին և նա տնօրինում էր դրանք ինչպես կամենար՝ բաժանում էր իր որդիների միջև։ Նույնիսկ 15-րդ դարում Զոբան բեյի հետնորդները, որոնք հայտնի էին Զոբան օղուլլարը անունով, Կաստամոնուի շրջանի տերն ու տիրակալն էին։ Սրանք արդեն նվերների և կաշառքի միջոցով շրջանի տիրակալը դարձած իսկական դերեբեյներ էին»[50]։

Հնարավոր է, որ Զոբան բեյի հետնորդների և XIX դ. սահմանագլխին կենտրոնական Անատոլիայի տիրակալները դարձած Զափան օղուլների միջև գոյություն ունի անմիջական կապ, առավել ևս, որ երկու տոհմերն էլ թուրքմենական ծագում ունեին և բնակվում էին նույն տեղանքում։ Կոնիական սուլթանաթի անկման շրջանում Փոքր Ասիայում առաջացան մի շարք իշխանություններ, որոնցից մի մասը շարունակում էր գոյատևել Օսմանյան կայսրության օրոք։ Դրանցից էին այնպիսի տոհմեր, ինչպիսիք էին Էվրենոս օղուլլարը, Միխալ օղուլլարը, Թուրխանլը օղուլլարը և այլն[51]։ Նրանց հետնորդներն էլ քուրդ ավատապետերի հետ XVIII դ. ընթացքում կազմեցին այն ֆեոդալական ինստիտուտը, որը կոչվեց դերեբեյլիք կամ դերեբեյություն։ Ինչ վերաբերում է կենտրոնախույս վալիներին և այլ պետական պաշտոնյաների, ապա նրանք ձգտում էին ձեռք բերել նույնպիսի արտոնություններ, ինչ արդեն ունեին դերեբեյները՝ (հողի մասնավոր սեփականություն, ժառանգական իշխանություն, ենթակա բնակչությանը միսնձնյա կեղեքելու ազատություն և այլն)։ Այլ կերպ ասած, նրանք ձգտում էին դառնալ իսկական դերեբեյներ։ Հարկ է ասել, որ XVII—XIX դդ. կենտրոնախույս ձգտումների ուժեղացումը օսմանյան կառավարության վարած կենտրոնացման քաղաքականության սնանկացման հետևանքն էր և պատմության զարգացման ընդհանուր միտումը տանում էր մասնավոր հողատիրության ձևերի վերահաստատմանը։

Ի տարբերություն քուրդ, թուրքմեն և մասամբ թուրք ավատապետերի, որոնք իրենց իշխանությունը ստացել էին կառավարությունից, նորընծա դերեբեյներն իրենց նպատակին հասնելու համար դիմում էին բռնի միջոցների, որոնք արտահայտվում էին հակակառավարական ելույթների ձևով։ Այս միջոցով դերեբեյներ դարձան Կարաոսման օղուլները, Ալի փաշա Թեփեդելենլին, Դաղդևիրեն օղուլն, Բատտալ փաշան և այլն։ Այսպիսով, դերեբեյության ինստիտուտը տարածվեց ողջ Անատոլիայում և նրանց ու կառավարության փոխհարաբերությունների խնդիրը վերածվեց ողջ օսմանյան ֆեոդալիզմի գոյության հարցի։ Ճիշտ է, սուլթան Մահմուդ II-ի օրոք (1808—1839) կառավարությանը հաջողվեց վերացնել թուրք, թուրքմեն, ապա նաև քուրդ դերեբեյների քաղաքական ինքնուրույնությունը, սակայն տնտեսական բնագավառում նրանց իշխանությունը պահպանվեց։ Ինչպես հա-

---

[50] В. Гордлевский, Государство сельджукидов Малой Азии, М., 1946, с. 78.

[51] D. Avcıoğlu, Türklerin Tarihi, c. 1, Istanbul, 1978, s. 100.

ղորդում է ռուս գիտնական և ճանապարհորդ Պ. Չիխաչևը, դերեբեյլիք ինստիտուտի պաշտոնական վերացումից հետո էլ դերեբեյների ժառանգները, որոնք արդեն կոչվում էին աղաներ, շարունակում էին բնակիչներից գանձել նույն հարկերը, ինչ և նրանց նախորդները։ 1858 թ. սուլթանական կառավարության հրապարակած օրենքի համաձայն դերեբեյները դարձան իրենց ենթակա հողերի սեփականատերն ու մտան նորաստեղծ գավառային խորհուրդների կազմի մեջ, այսինքն նրանց գործունեությունն օրինականացվեց[52]։

Ի տարբերություն այանների, որոնք մեծ մասամբ ապրում էին քաղաքներում կամ սեփական չիֆթլիքներում (ագարակ), դերեբեյներն ապրում էին անառիկ ամրոցներում, որտեղ նրանք կարող էին դիմադրել կառավարական զորքերին։ Նրանք անընդհատ ընդհարվում էին հարևան մարզերի դերեբեյների հետ, որը ծնունդ էր տալիս անվերջ պատերազմների, որոնց հետևանքով ավերվում և ամայանում էին ամբողջ շրջաններ։

Գոյություն ունի մի օրինաչափություն. այանները, որպես կանոն, երևան են եկել կայսրության եվրոպական գավառներում, Արևմտյան Անատոլիայում և Փոքր Ասիայի ափամերձ շրջաններում, որտեղ ապրանքադրամային հարաբերությունները համեմատաբար զարգացած էին։ Ինչ վերաբերում է դերեբեյներին, ապա սրանք գերիշխում էին արևելյան, հարավ-արևելյան և մասամբ հարավային մարզերում, ուր ֆեոդալական հարաբերությունները դեռ բավական ուժեղ էին։ Այանների տիրապետության տակ գտնվող շրջաններում գյուղացիների շահագործման մեջ արտատնտեսական հարկադրանքը գնալով փոխարինվում էր տնտեսականով և հող էր ստեղծվում նոր արտադրական հարաբերությունների զարգացման համար։ Իսկ դերեբեյների տիրույթներում գերիշխում էր արտատնտեսական հարկադրանքը։ Դրա իրացման հզոր գործոն էին հատկապես քուրդ դերեբեյների ավազակային ջոկատները։

Այսպիսով, այանլըք և դերեբեյլիք ինստիտուտները ներկայացնում էին օսմանյան ֆեոդալիզմի զարգացման երկու հակամարտ միտումները։ Այանլըք ինստիտուտը դարձավ նոր հողատիրական ձևերի առաջացման արտահայտությունը։ Այն ծագեց պետական հողատիրությունից մասնավոր հողատիրության անցման շրջանում և, թուլացնելով ավատատիրական հարաբերությունները երկրի սոցիալ-տնտեսական կյանքում, նպաստեց ավելի առաջավոր արտադրական հարաբերությունների զարգացմանը։

Ի հակադրություն այանների, դերեբեյներն ամեն կերպ ձգտում էին հավերժացնել ֆեոդալական հարաբերությունները՝ մեծ հարված հասցնելով երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացին։ Այդ պատճառով նրանք հանդես էին գալիս բոլոր տեսակի բարեփոխությունների դեմ և նրանց ելույթները շատ հաճախ ստանում էին անջատողական բնույթ։

Հարկ է նշել, որ դերեբեյության հետևանքները վերջնականապես վերացնելու ուղղությամբ թուրքական կառավարության ջանքերը մինչև օրս էլ հաջողությամբ չեն պսակվել։

---

52 П. А. Чихачев, Письма о Турции, М., 1960, с. 66—69.

ОБ ИНСТИТУТАХ АЯНЛЫК И ДЕРЕБЕЙЛИК

МУРАД БОДЖОЛЯН

Резюме

Институт аянлык возник в XVII—XVIII вв. и стал выражением перехода от государственной формы землевладения к частнособственнической.

Возникновение деребейлика связано с антиармянской политикой турецких завоевателей в Западной Армении, земли которой были распределены между курдскими феодалами. Именно установленный ими в Западной Армении порядок и получил в армянской среде название деребейлик. Позже деребеи превратились в центробежную силу и все непокорные центральной власти феодалы стали называться деребеями.

Сфера деятельности аянов охватывала европейские провинции и прибрежные районы азиатской Турции, где товарно-денежные отношения были сравнительно развиты. Что же касается деребеев, то они господствовали на востоке империи.